ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

2 (18), 2008

ՀՏԴ 941 (479.243) *Պատմություն*

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ 1995-1998թթ.

Ա. Բ. Աբստամյան

1991թ. անկախություն ձեռք բերած ԼՂՀ-ում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նպատակամղվեց ազատական տնտեսության կայացմանը: ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձեւավորված մի շարք ինքնուրույն պետությունների հետ մեկտեղ, ԼՂՀ-ն պետք է մշակեր սոցիալ-տնտեսական զարգացման իր ուրույն ռազմավարությունը, լուծեր անցման խնդիրների հետ կապված բազմաթիվ դժվարություններ:

Իր նշանակությամբ գյուղատնտեսությունը հանդիսանում է Արցախի տնտեսության առաջատար ճյուղը: Հաշվի առնելով տեւական շրջափակման եւ տնտեսական փլուզման մեջ գտնվող հանրապետության սոցիալ- տնտեսական իրավիճակի վրա ագրարային ոլորտի ունեցած վճռորոշ ազդեցությունը՝ գյուղատնտեսությունը դիտվեց որպես տնտեսական քաղաքականության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկը: Ագրարային ոլորտի զարգացումը պահանջում էր ոչ միայն շուկայական տարրերի արմատավորում, վարչահրամայական համակարգի արտանձնից ոլորտի մաքրում, խորհրդային Ադրբեջանից վարած խտրական քաղաքականության արդյունքում տնտեսության մեջ առաջացած բազմաթիվ հիմնախնդիրների լուծում, տնտեսական շրջափակման, պատերազմական գործողությունների հետեւանքով քայքայված գյուղատնտեսության վերականգնում: Նորանկախ ԼՂՀ-ն որպես ժառանգություն ստացավ Ադրբեջանին բռնակցված ԼՂԻՄ-ի արատավոր «հաշմանդամ» եւ ադրբեջանական ագրեսիայի արդյունքում խեղված գյուղատնտեսություն: Ադրբեջանին բռնակցված ԼՂԻՄ-ի գյուղատնտեսությունը զարգանում էր բացառապես Ադրբեջանին պատրաստի արտադրանք մատակարարելու պայմաններում, որպես հումքային կցորդ[1]: Նախկին մարզի տնտեսական կյանքում, այդ թվում գյուղատնտեսության ոլորտում առկա էին բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, որոնք Ադրբեջանի ղեկավարությունը միտումնավոր չէր լուծում:

1988թ. սկսված տնտեսական շրջափակման, պատերազմական գործողությունների արդյունքում էլ ավելի է խաթարվել ԼՂՀ-ի տնտեսական կյանքը, նրան հասցվել է վիթխարի տնտեսական վնաս: Պատերազմական գործողությունները խոշոր վնաս են հասցրել գյուղատնտեսության ոլորտին: 1988-1991 թթ. գյուղատնտեսական ապրանքների տարեկան միջին արտադրությունը նվազել է 31.3%-ով, զգալի չափով կրճատվել է անասունների գլխաքանակը: Մշակվող հողային մակերեսը կրճատվել է 60.3 հազ. հա-ով: Հետպատերազմյան ժամանակաշրջանում չէին՝ օգտագործվում գյուղատնտեսական նշանակության ավելի քան 40 հազ. հա հողահանդակներ:[2]

1994թ. հրադադարի հաստատումից հետո, նորաստեղծ ԼՂՀ-ն պատերազմից ավերված տնտեսության վերականգնմանը զուգահեռ, ձեռնամուխ է եղել տնտեսական բարեփոխումների, որոնց սկզբնական փուլը բնութագրվում էր սեփականության իրավական հիմքի ստեղծումով, շուկայական հարաբերություններին անցման գործընթացով:

Արցախում գյուղատնտեսության ոլորտում հողային բարեփոխումների սկիզբը դրվեց 1995թ.՝ տնտեսական բարեփոխումների հիմնադրույթների ընդունմամբ: Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում էր բարեփոխումներն իրականացնել աստիճանաբար՝ բացառելով դեռեւս հողի սեփականաշնորհումը: Այս բնագավառում բարեփոխումների հիմնական ուղղությունը պետք է դառնար գոյություն ունեցող պետական տնտեսությունների եւ

[1] Մելքումյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., 1999, էջ 288:
[2] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, Եր., 2004, էջ 249:

կոլտնտեսությունների վերափոխումը գյուղատնտեսական կոլեկտիվ փայատիրական ընկերությունների՝ գնելով մնալով հողի սեփականաշնորհումից:[1] Գյուղատնտեսության անկումը կանխարգելելու եւ հետագա զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ էր, որպեսզի տնտեսական բարեփոխումների գործընթացն ունենար երկարատեւ անցումային փուլ:

Գյուղատնտեսության բնագավառում ագրարային բարեփոխումների գործընթացն իրականացվեց հետեւյալ փուլերով՝ նախ, 1995թ. ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սեփականության մասին օրենքը, ըստ որի հողը հայտարարվեց պետական սեփականություն, որը տրվում էր վարձակալական օգտագործման գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսություններին, կամ անհատական տնտեսություններին: Վարձակալված հողի վրա կարող էին կազմակերպվել ինչպես գյուղացիական կոլեկտիվ, այնպես էլ մասնավոր գյուղացիական տնտեսություններ: Գոյություն ունեցող կոլտնտեսությունների եւ խորհրդտնտեսությունների հիմքի վրա կազմակերպվեցին գյուղացիական կոլեկտիվ (փայատիրական) տնտեսություններ(ԳԿՏ), որի յուրաքանչյուր անդամը ուներ իր բաժնեմասը, փայը տնտեսության ընդհանուր կանոնադրական ֆոնդում: Բարեփոխումների էությունը արտադրության միջոցների նկատմամբ սեփականատիրական հարաբերությունների արմատական փոփոխության մեջ էր, որի նպատակն էր մրցակցային միջավայրի ստեղծման հիման վրա բարձրացնել արտադրության արդյունավետությունը եւ գյուղմթերքներ արտադրողներին շահագրգռել աշխատանքի արտադրողականության մեջ:

Հաջորդ փուլում 1996թ. ԳԿՏ-երը հիմնակվեցին փակ բաժնետիրական (փայատիրական) ընկերություններ: ԳԿՏ-երը, կամ ՓԲԸ-ը պետական հողի հավաքական վարձակալներ էին հանդիսանում:

Չնայած տնտեսավարման արդյունավետության առումով մասնավոր սեփականությունը առավելություններ ուներ, այդուհանդերձ կտրուկ ձեւով անցումն այդ տնտեսաձեւին կարող էր լուրջ ցնցումներ բերել: Արտակարգ իրավիճակի պայմաններում հողի սեփականաշնորհման իրագործումը հղի է լուրջ, անկանխատեսելի հետեւանքներով, հետեւաբար հաշվի առնելով պատերազմական իրավիճակը, ԳՏԿ-երի ստեղծումը, հողերը վարձակալությամբ տալու ցաքաքականությունը տվյալ պահին ավելի արդյունավետ էր: Փաստորեն ԳԿՏ-երի ստեղծումը նշանակում է, որ կառավարությունը գյուղատնտեսության ոլորտում աստիճանական բարեփոխումների ուղեգիծ է մշակել: Դա մի ժամանակահատված էր, անցումային մի փուլ, որը գյուղացուն հնարավորություն պետք է տար անցում կատարել տնտեսավարման նոր ձեւերի, հոգեբանորեն նախապատրաստվեր հողի սեփականաշնորհմանը: Անթույլատրելի էր Արցախի գյուղատնտեսության ոլորտում կիրառել սեփականաշնորհման Հայաստանյան տիպահանչակ փորձը, հակառակ կայծակնային բարեփոխումները այդ ոլորտում չպետք է կատարվեին: Նախ որովիետեւ սեփականաշնորհումը ենթադրում է երկրի կայուն քաղաքական վիճակ, ինչն Արցախում բացակայում էր իսկ նման արտակարգ պայմաններում երկրի տնտեսական կյանքում ոչ թե սեփականաշնորհում, այլ ազգայնացում, պետական կենտրոնացում ու կարգավորում են մտցնում: Բացի դրանից հողի սեփականաշնորհումը ենթադրում է ձեռներեց մենատնտես գյուղացու ձեւավորումը, որն ի վիճակի է զարգանալ եւ բարգավաճել: Արցախում չկային այն պայմանները որոնք հնարավորություն կտային գյուղացուն միայնակ վարել իր տնտեսությունը եւ հաջողակ ֆերմեր դառնալ: Բոլոր դեպքերում Արցախին վիճակված էր թեւակոխել ագրարային բարեփոխումների աստիճանական փուլ: Ի տարբերություն ՀՀ-ում իրականացված ագրարային բարեփոխումների (ՀՀ-ում 1991թ. սկսվեց հողերի սեփականաշնորհման գործընթացը եւ անմիջապես հողը տրվեց գյուղացուն) ԼՂՀ -ում փաստորեն որդեգրվեցին ուրույն սկզբունքներ, ըստ որի պետական սեփականություն հայտարարված հողը վարձակալությամբ տրվեց գյուղատնտեսական տնտեսություններին, հնարավորություն ընձեռվեց այդ հողերում կազմակերպել ինչպես կոլեկտիվ, այնպես էլ մասնավոր տնտեսություններ:[2]

Հաջորդ փուլում՝ 1998թ. ԼՂՀ-ում ընդունվեց «Հողի սեփականաշնորհման մասին» օրենքը[3], որի կիրարկմամբ ենթադրվում էր նպաստել հողերի գիտականորեն հիմնավորված

---

[1] ԼՂՀ օրենքներ, ԼՂՀ կառավարության որոշումներ, Ստեփ., 1995, էջ 5:
[2] Սարգսյան Հ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. Պետության դերը, Եր., 2003, էջ 28:
[3] ԼՂՀ գործող օրենքների ժողովածու, 1994-2001թթ., Ստեփ., 2001, էջ 248:

արդյունավետ օգտագործմանը, սեփականության բազմաձեւության հիման վրա տնտեսությունների բոլոր ձեւերի իրավահավասար զարգացմանը, գյուղատնտեսության առաջընթացին։ Հարկադրված էր գյուղացուն։ Մինչեւ 1999թ.-ի առաջին կիսամյակը հիմնականում ապրանքային սեփականաշնորհման գործընթացը։ Որպես սեփականություն ԷՈՂՀ բաժանաբաժնումներ հատկացվեց մոտ 26 հազ. հա վարելահող, մոտ 2 հազ. հա բազմամյա տնկարկներ, ավելի քան 2,5 հազ. հա տնամերձ հողեր, յուրաքանչյուր ընտանիքի միջին հաշվով հատկացվեց 2,5 հեկտար։[1] Գյուղացու մոտ ձեւավորվեց սեփականատիրական մտածելակերպ, ապա գյուղատնտեսության բնագավառում գբաղվածների թիվը։ Այս փոփոխությունները կարող էին գյուղատնտեսության եւ գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման կարեւոր խթանի վերածվել, եթե դրանք ամրապնդվեին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, կարգավորվեին արտադրական հարաբերություններով, պետական կարգավորմամբ եւ հովանավորությամբ։ Սակայն հողի սեփականաշնորհումը չտվեց այն արդյունքը, ինչ ակնկալվում էր։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 1998թ. 8.2 միլրդ. դրամով նախորդ տարվա մակարդակից նվազել է 19.7%-ով։[2] Հողի սեփականաշնորհման գործընթացում գրանցվեցին բազմաթիվ թերություններ, որոնք էլ պատճառ հանդիսացան գյուղատնտեսության ոչ համամասնական զարգացման։

Գյուղատնտեսության ետընթացի, նահանջի հիմքում ընկած էին ագրարային արմատական վերակառուցման աշխատանքներում տեղ գտած մի շարք լուրջ սխալներ, թերություններ ու վրիպումներ, որոնց բացահայտումն ու հաղթահարումը կարող են նպաստել գյուղատնտեսության եւ գյուղի սոցիալական առաջընթացին։ Նախ՝ պլանավորված սեփականաշնորհումը բավականաչափ քննության չառնվեց։ Արդյոք համահունչ էր տարածաշրջանի Արցախի պայմաններին։ Հողերը Արցախում սեփականաշնորհվեցին տնտեսության ազատականացումից բավական անց։ Եւ փոխանակ հաշվի առնելու Հայաստանում սեփականաշնորհման գործընթացում թույլ տրված սխալները, ընդհակառակը այդ սխալները պարզապես «տեղափոխվեցին» և ընթացքավորվեցին Արցախում։

Այսպես՝

1. Սեփականաշնորհումը կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների։ Հողը առանց գյուղատնտեսական տեխնիկայի եւ նրա օգտագործման հնարավորությունների եւ այլ խնդիրների խորը քննության։ Մասնավոր հողօգտագործման անցնելը բարդ եւ տնտեսական գործընթաց է, որը չի կարելի լուծել մեկ հարվածով։

Սեփականաշնորհման արդյունքում գյուղացին մնաց մեն-մենակ իրեն բաժին հասած հողակտորի մշակման աշխատանքների հետ։ Եվ հոգեբանորեն եւ տեխնիկական հնարավորություններով, հողի մշակը հայտնվեց միայնակ ու անպաշտպան վիճակում։

Հողի մասնավորեցումը տեղի ունեցավ գյուղատնտեսական արտադրության ցածր մեքենայացման պայմաններում, գյուղտեխնիկաներ չունեցող հողասեփականատերերի մի վիթխարի զանգված կանգնեց հող մշակելու դժվար լուծելի խնդրի առաջ։ Չկար համապատասխան տեխնիկա, եղածներն էլ ֆիզիկապես մաշված, հնացած վիճակում էին։ Նման վիճակում գյուղացիների մի զգալի մասը ստիպված էր աշխատել պրիմիտիվ տնտեսավարման պայմաններում, ապավինելով ձեռքի աշխատանքին։

2. Հողի մշակությունը, հանգամանքների բերումով, որոշ դեպքերում տարվում է ագրոտեխնիկական պահանջվող կանոններին հակառակ։ Նախ, տարիներ շարունակ այդ մի կտոր հողի վրա կատարվում է նույն մշակաբույսի զանգ՝ մոնոկուլտուրա, ինչն էլ առաջ է բերում հողի միակողմանի աղքատացում։ Ցածր քերքատվության պատճառներից մեկն էլ պարարտանյութի սակավությունն է։ Ցածր մակարդակի վրա է գտնվում սերմնաբուծությունը, որին պետական հովանավորություն է անհրաժեշտ որ այն մասնագիտական մոտեցում է պահանջում։ Կոլտնտեսությունների եւ խորհտնտեսությունների հետ փաստորեն լուծարվեցին նաեւ գյուղատնտեսական արտադրությունն սպասարկող ծառայությունները՝ մեքենատրակտորային կայանները, սերմնաբուծական, անասնաբուծական ծառայությունները եւ այլն։ Շուկայական համակարգի պայմաններում պետք է նման ագրոտեխնիկական ծառայությունները ստեղծվեն եւ կենտրոնացվեն։

---

[1] «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա» N10 հուլիս, 2002, էջ 24։
[2] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999թթ., Ստեփ., 1999, էջ 126։

3. Հողի սեփականաշնորհումը կատարվեց առանց հաշվի առնելու տարածքի իրական հնարավորությունները, երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները, տեղական այն կոնկրետ բացասական գործոնները, որոնք լուրջ խոչընդոտ կարող էին դառնալ գյուղատնտեսության հետագա զարգացման համար: Սեփականաշնորհումը պետք է իրականացվի տվյալ երկրի սոցիալ-տնտեսական եւ բարոյական իրավիճակի բազմագործոն վերլուծության հիման վրա: Սեփականաշնորհման գործընթացի իրագործումն պահանջում է համակարգված մոտեցում: Այդ գործընթացի հաջողությունը մեծապես կախված է երկրի տնտեսական կյանքի բազմաթիվ հիմնախնդիրների լուծումից: Խնդիրը նրանում է, որ Արցախի հողագործը կանգնում է մեկ այլ խրթին հարցի առջեւ, որտեղ իրացնել արտադրանքը: Արդ, ինչ շուկայական հարաբերությունների, սեփականաշնորհման եւ զարգացման մասին կարող է խոսք լինել, եթե հանրապետության հիմնական արտադրողը՝ գյուղացին, ի վիճակի չէ իր արտադրած մթերքները իրացնել: Գյուղատնտեսական մթերքների իրացման ձեռնարկությունների բացակայությունը ստիպում է գյուղացուն արտադրել այնքան, որքան պահանջարկ կար տեղական շուկայում: Այսպիսով, գյուղացին շահագրգռված չէր շատ արտադրել, քանի որ նրա համար հրատապ խնդիր էր դառնում արտադրանքի իրացման պրոբլեմը: Փաստորեն ապրանքը արտադրանքի չէր վերածվում, թե անասնապահական, թե բուսաբուծական մթերքների գծով ԼՂՀ-ում իրացման շուկա գրեթե չկար:

4.Հողի մշակությունը կատարվում էր ոչ պատշաճ մակարդակով: Արցախցի հողամշակի համար օրախնդիր էր նույն տագնապը. ինքը մնում է եղանակի քմահաճույքի գերին: Սովորական մեղվ երաշտն անգամ այստեղ կարող էր ճգնաժամային իրավիճակներ հարուցել: Ինչու՞ որովհետեւ հանրապետությունում պարզապես չկար ոռոգման համակարգ: Հակակարկտային ծառայություն նույնպես իսպառ բացակայում էր: Այդ էր պատճառը, որ գյուղացու քրտնաջան աշխատանքի արդյունքը երբեմն իսպառ վերանում էր: Հողի մշակությունը անբավարար էր կատարվում նաեւ այն պատճառով, որ հանրապետության առանց այն էլ փոքր մակերեսը ունեցող մշակովի հողակտորները էլ ավելի մանրատվեցին, իսկ մանրատված, փոքր հողամասերում դժվար էր համակարգված ցանքաշրջանառություն, նորմալ ոռոգում, պարարտացում և մեքենայացված մշակում կազմակերպել: Դեռ ավելին, մասնավորեցման արդյունքում մանրատված այդ հողաբաժինները հաճախ տեղակայված լինելով լեռնային եւ լանջանային շրջաններում եւ գտնվելով գյուղացի սեփականատիրոջ ուշադրությունից բավականին հեռու, այդպես էլ թողնվում էին անմշակ վիճակում, նման վայրերում գտնվող հողատարածքներում պահանջվում էր առավել մեծ աշխատանք, իսկ հեռավորության եւ սպառողության ցածր մեքենայացման պայմաններում այդ հողատարածքների մշակումը դառնում էր մեծագույն խնդիր, կամ էլ թողնվում էր անմշակ:

5. Հողի սեփականաշնորհման գործընթացում թերագնահատվեց պետության կարգավորիչ դերը: Հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունը իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է պետության գործուն հովանավորություն գյուղատնտեսությանը, ֆինանսական ու վարկային պետական աջակցություն: Գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու համար եւ գյուղատնտեսության ոլորտում նոր տնտեսական հարաբերությունների ամրապնդման, որոշ կարեւորագույն մթերքների ինքնաապահովության մակարդակի բարձրացման նպատակով 1998թ. մշակվել է գյուղացիական տնտեսություններին արտոնյալ պայմաններով վարկերի հատկացման կարգը:

Տնտեսական ոռոգ համակարգը, հատկապես գյուղատնտեսությունը հանդիսանում է ազգաբնակչության տնտեսության կայուն զարգացման երաշխիք, գրեթե բոլոր երկրներում, որպես տնտեսության ճյուղ, այն ունի պետական աջակցության կարիք: Փորձը ցույց է տալիս, որ ի հարաբերություն տնտեսության տարբեր ճյուղերի՝ գյուղատնտեսությունը, հատկապես զարգացման սկզբնական փուլում, չի կարող հաջողությունների հասնել՝ առանց պետության աջակցության[1]:

Անհրաժեշտ է պետական հովանավորությամբ աջակցել, նպաստել գյուղատնտեսական արտադրության վերամշակման եւ իրացման բնագավառների միջեւ կապերի

«Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N6 մայիս, 2006, էջ 246:

տեղծմանը: Ընդհանրապես ՀՀՀ-ն ագրարային նրանից է, որը մասնավորների գնահատ
կարող է բարդացնել գյուղացիներին, մենաշնորհները այլ ազատամարտի ոչ միայն
այլեւ ՀՀ-ում: Ինչպես վերլուծությունը պատկերում է հանրապետության ագրարային
հետագա բարեփոխումների ռազմավարության երկարաժամկետ ծրագրի մշակումը:
կարի կարելիություն է գյուղատնտեսության կայուն զարգացումը: Գյուղատնտ
հանդիսանում է Աբգարի տնտեսության առաջատար ճյուղը, այդուհանդերձ նրան է բարդ
մասնակիորեն, այդուհանդերձ այդուհանդերձ նրան է արտ: ՀՀՀ-ում գյուղատնտեսությունը ունի
ազգեցիկան, այնպես էլ ռազմավարական մեծ նշանակություն: Նկատելով
սոցիալական դիրքից եւ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակից
հասնել խիստ կարեւոր է սեփական սեփականների հարցին լուծել պարենային անվտանգ
շեմին ստանալու խնդիրը: Կարեւոր է գյուղատնտեսության դերը նաեւ արդյունաբեր
զանազան ճյուղերի նորմալ կենսագործունեության ապահովման իմաստով: Սոցիալ
առումով գյուղատնտեսության դերը կարեւորվում է նրանով, որ ՀՀՀ-ի բնակչության մի
հատվածը ապրում է գյուղական բնակավայրերում և բնակչության այդ հատվածի կ
մայրաքաղաքի հետ կապված խնդիրները ուղղակիորեն կապված են տնտեսության այս ոլ
զարգացման մակարդակի հետ: Ագրարային նրանից համար ինչպիսին Արցախն է, շատ կ
է գյուղատնտեսության զարգացումը, գյուղական բնակչության ամրացումը հողի վրա, նրա
համար հոգի մշակությունը շահութաբեր դարձնելու, գյուղատնտեսության զարգաց
նպաստող պայմանները ստեղծելու անհրաժեշտությունը: Հանրապետության տնտեսա
ագրարային հատվածի զարգացումը պահանջում է հստակ ծրագիր և բարեփոխություն:

Резюме

В статье представлены проведенные в НКР аграрные реформы 1995-1998гг. Переход
частному землевладению осуществлялся без предварительно разработанной програ
вследствии чего при осуществлении приватизации земли, был допущен ряд существен
ошибок.

Գրականություն

1. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր.,1999:
2. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, Հանրագիտարան, Եր, 2004:
3. ՀՀՀ Օրենքներ, ՀՀՀ Կառավարության որոշումներ, Ստեփ., 1995:
4. Սարգսյան Հ., Տնտեսական բարեփոխումները Հայաստանում, պետության դերը, Եր, 2003
5. ՀՀՀ գյուղոր օրենքների ժողովածու, 1994-2001, Ստեփ. 2001:
6. «Հայաստան. Ֆինանսներ և Կոնոմիկա», N 10, հոկտ. 2002:
7. ՀՀՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999, Ստեփ., 1999:
8. «Հայաստան. Ֆինանսներ և Կոնոմիկա», N 6, մայիս, 2006:

ԱՊՀՀ պատմության ամբիոն